

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կարգն ընդունված է «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի եւ 21-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներին համապատասխան:
- 1.2. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում պետական եւ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաեւ հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների (այսուհետեւ՝ կազմակերպություններ) ասպիրանտուրայի ընդունելության կարգը:

2. Հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը եւ ժամանակացույցը

- 2.1. Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար ստեղծվում է ընդունող հանձնաժողով:
- 2.2. Ասպիրանտուրա դիմորդը ավարտական տարվա ընթացքում հանձնում է օտար լեզվից եւ ինֆորմատիկայի եւ համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգաքններ (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատումով)
 - ա) անգլերեն լեզու - «TOEFL» ստորին անցումային միավորին համապատասխան
 - բ) գերմաներեն եւ ֆրանսերեն լեզուներ - «Test DaF» եւ «TCF» պահանջներին համապատասխան մակարդակով
Մասնագիտության առանձնահատկությունից ելնելով դիմորդը կարող է հանձնել քննություն այլ օտար լեզվից՝ նախարարության թույլտվությամբ:
 - գ) «Համակարգչից օգտվելու հմտություններ» - համակարգչից օգտվելու հմտությունների ծրագրերի նվազագույն մակարդակի պահանջներին համապատասխան:
- 2.3. Օտար լեզվի եւ ինֆորմատիկայից եւ համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգաքնների արդյունքները գործերը հանձնելիս ներկայացվում են կազմակերպությունների ընդունող հանձնաժողովներին:
- 2.4. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ (այսուհետեւ՝ հանձնաժողովներ): Մասնագիտական հանձնաժողովների կազմում ընգրկվում են կազմակերպությունում աշխատող տվյալ մասնագիտությամբ գիտության դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտամանկավարժական եւ գիտական կադրեր: Համապատասխան կադրերի բացակայության դեպքում մասնագիտական հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել մասնագետներ այլ կազմակերպություններից:
- 2.5. Մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը ասպիրանտուրա ընդունվողին տալիս է կազմակերպության ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից եւ ինֆորմատիկայից եւ համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգաքնների դրական արդյունքների եւ ներկայացված գիտական ռեֆերատի (առնվազն 20 տպագրական էջի սահմաններում՝ հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի, հայտնագործությունների եւ գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունների բացակայության դեպքում) վերաբերյալ մասնագիտական ամբիոնի (սեկտորի, դեպարտամենտի) կամ գիտական ստորաբաժանման կողմից գրավոր դրական գրախոսականի դեպքում:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների անցկացման ժամանակացույցը հաստատում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը եւ քննությունների սկսվելուց 1 շաբաթ առաջ տեղեկացնում է ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը (այսուհետեւ՝ նախարարություն) քննության անցկացման տեղի եւ ժամի վերաբերյալ:

- 2.6. Մասնագիտական քննությունից «բավարար» գնահատական ստացած դիմորդները զրկվում են ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից (8-12 միավոր՝ 20 բալանոց սանդղակով, 3 միավոր՝ 5 բալանոց սանդղակով):
- 2.7 Հարգելի պատճառով մասնագիտական քննությանը չներկայանալու դեպքում սահմանվում է նոր ժամանակացույց ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների համար՝ պահպանելով դրանց անցկացման համար սահմանված վերջին ժամկետը: Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը նոր ժամանակացույցի մասին տեղեկացնում է նախարարությանը:

3. Քննական ծրագրերը եւ մասնագիտական քննության անցկացումը

- 3.1. Մասնագիտական առարկայից քննության հարցաշարը, որն ընդգրկում է ծրագրային ողջ նյութը (առնվազն 100 հարց), կազմվում է կազմակերպությունների մասնագիտական ամբիոններից (դեպարտամենտներից), գիտական ստորաբաժանման կամ մասնագիտական հանձնաժողովի կողմից եւ հաստատվում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից (տրամադրվում է դիմորդներին): Դրա հիման վրա քննությունից առնվազն 5 օր առաջ հանձնաժողովի նախագահը կազմում է առնվազն 25 հարցատոմսեր (առաջադրանքներ)՝ ներառելով ողջ հարցաշարը, որոնք հաստատվում են կազմակերպության կնիքով: Հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերահաստատվում են: Մասնագիտական քննությունների անցկացման ձեւը (գրավոր կամ բանավոր) սահմանում է կազմակերպության ընդունող հանձնաժողովը:
- 3.2. Մասնագիտական առարկայից ասպիրանտուրա ընդունվողի գիտելիքների գնահատումը կատարվում է կազմակերպության ընդունող հանձնաժողովի կողմից մշակված համակարգով՝ հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամների առնվազն 2/3-ի ներկայությամբ: Մասնագիտական քննության անցկացումն արձանագրվում է ասպիրանտուրա ընդունվողի քննական թերթում (Ձեւը կցվում է:)՝ նշելով առաջադրված հարցերը եւ ստացված գնահատականը: Քննական թերթում ստորագրում են հանձնաժողովի նախագահը եւ ներկա գտնվող հանձնաժողովի անդամները: Ընդունվողի գիտելիքների գնահատման մասին որոշումը ընդունվում է որպես հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականը: Մասնագիտական քննությունը հանձնված է համարվում, եթե դիմորդը ստացել է առնվազն «13» միավոր «20» բալանոց սանդղակով կամ առնվազն «4» միավոր «5» բալանոց սանդղակով:
- 3.3. Դիմորդը քննության կամ ստուգարքի է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:
- 3.4. Անգլերեն լեզվից “TOEFL” դասընթացները կազմակերպում է Հայաստանի Ամերիկյան համալսարանը, իսկ ստուգարքը՝ IREX կազմակերպությունը:
Գերմաներեն լեզվից “Test DaF” դասընթացները եւ ստուգարքները կազմակերպում է DAADE-ն:
Ֆրանսերեն լեզվից TCF դասընթացները եւ ստուգարքը կազմակերպում է “Alliance Francaise”-ը:
Օտար լեզվից ստուգարքների գնահատման չափանիշները սահմանվում են վերոհիշյալ ծրագրերին համապատասխան: Յուրաքանչյուր տարվա նոյեմբերի վերջին տասնօրյակում ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը հրապարակում է տվյալ տարվա ընդունելության համար առարկայական անցումային շեմը՝ ըստ մասնագիտությունների (բնագիտական, տեխնիկական եւ հումանիտար):
- 3.5. Ինֆորմատիկայից եւ համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարքի ծրագիրը եւ հարցաշարը կազմվում է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ստեժված առարկայական հանձնաժողովի կողմից: Ստուգարքն ընդունում է Երեվանի պետական համալսարանի հաշվիչ կենտրոնը:
- 3.6. Նշված ստուգարքները հանձնվում են ուսումնական տարվա ընթացքում՝ մինչեւ

ասպիրանտուրայի ընդունելության հայտարարությունը: Ստուգարքներից անբավարար գնահատական ստացած դիմորդը կարող է դրանք վերահանձնել մինչև ընդունելության գործերի հանձնումը:

4.Մրցույթի անցկացում

4.1 Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները ըստ հերթականության`

- ա) օտար լեզվից եւ ինֆորմատիկայի եւ համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգարքներից ստացած գնահատականները (զումարային ձեւով),
- բ) հրատարակված գիտական աշխատանքների քանակը,
- գ) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը,
- դ) մագիստրոսական ավարտական աշխատանքի պաշտպանության եւ դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի գնահատականը,
- ե) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

